ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Քաջարան համայնքի ղեկավարը հայտարարում է մրցույթ Քաջարանի համայնքապետարանի աշխատակազմի հետևյալ **համայնքային ծառայության թափուր պաշտոնները զբաղեցնելու համար՝**

1. **քաղաքաշինության, հողի վերահսկողության, կոմունալ տնտեսության, տրանսպորտի և համատիրությունների աշխատանքների համակարգման բաժնի գլխավոր մասնագետ (ծածկագիր՝ 2.3-5).**

Թափուր պաշտոնը առաջացել է 2025 թվականի փետրվարի 3-ին «Համայնքային ծառայության մասին» օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի «ա» կետի հիմքով,

2. **քաղաքաշինության, հողի վերահսկողության, կոմունալ տնտեսության, տրանսպորտի և համատիրությունների աշխատանքների համակարգման բաժնի գլխավոր մասնագետ (ծածկագիր՝ 2.3-6).** Թափուր պաշտոնը առաջացել է 2023 թվականի մարտի 7-ին ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի 2023 թվականի մարտի 7–ի «Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և զարգացման նախարարի 2017 թվականի դեկտեմբերի 7-ի N 326-Ա հրամանում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» N 386-Ա հրամանի հիմքով,

3. **կրթության, մշակույթի, սպորտի, առողջապահության և սոցիալական ծրագրերի բաժնի գլխավոր մասնագետ (ծածկագիր՝ 2.3-12).**

Թափուր պաշտոնը առաջացել է 2023 թվականի մարտի 7-ին ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի 2023 թվականի մարտի 7–ի «Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և զարգացման նախարարի 2017 թվականի դեկտեմբերի 7-ի N 326-Ա հրամանում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» N 386-Ա հրամանի հիմքով,

4. **եկամուտների հավաքագրման և քաղաքացիների սպասարկման կազմակերպման բաժնի գլխավոր մասնագետ (ծածկագիր՝ 2.3-15).**

Թափուր պաշտոնը առաջացել է 2025 թվականի սեպտեմբերի 18-ին ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի 2025 թվականի

սեպտեմբերի 18-ի «Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և զարգացման նախարարի 2017 թվականի դեկտեմբերի 7-ի N 326-Ա հրամանում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» N 2233-Ա հրամանի հիմքով,

5. աշխատակազմի առաջատար մասնագետ(ծածկագիր՝ 3.1-10)

Թափուր պաշտոնը առաջացել է 2026 թվականի մայիսի 14-ին ՀՀ վարչապետի 2026 թվականի հունվարի 29–ի N 71-Ա որոշման հիմքով:

Մրցույթի թեստավորման փուլի համար կազմված հարցաշարերը՝ ճիշտ պատասխանի տարբերակով, և բոլոր պաշտոնների անձնագրերը տես հետևյալ հղմամբ՝

https://kajaran.am/Pages/Misc/Announces/view.aspx?recID=607

Մրցույթին մասնակցելու համար դիմող Հայաստանի Հանրապետության քաղաքացիները և փախստականի կարգավիճակ ունեցող անձինք բնօրինակների հետ միասին, պետք է ներկայացնեն հետևյալ փաստաթղթերը՝

1) գրավոր դիմում (**լրացվում է տեղում**),

2) Հայաստանի Հանրապետության քաղաքացու դեպքում՝ անձնագրի կամ նույնականացման քարտի, իսկ փախստականի դեպքում՝ փախստականի կարգավիճակը հավաստող փաստաթղթի (դիպլոմ) պատճեն,

3) առաջատար խմբի երրորդ ենթախմբի պաշտոնների (ծածկագիր՝ 2.3-5, 2.3-6, 2.3-12 և 2.3-15) դեպքում ներկայացնել բարձրագույն կրթությունը հավաստող(դիպլոմ) փաստաթղթի պատճենը,

4) կրտսեր խմբի առաջին ենթախմբի պաշտոնի դեպքում (ծածկագիր՝ 3.1-10) ներկայացնել առնվազն միջնակարգ կրթությունը հավաստող փաստաթղթի (ատեստատ, դիպլոմ) պատճեն,

5) աշխատանքային գործունեությունը հավաստող փաստաթղթի պատճեն (առկայության դեպքում),

6) արական սեռի անձինք ներկայացնում են նաև զինվորական գրքույկի կամ դրան փոխարինող ժամանակավոր զորակոչային տեղամասին կցագրման վկայականի պատճեն՝ բոլոր լրացված էջերով,

7) մեկ լուսանկար՝ 3x4 սմ չափսի.

8) հայտարարություն այն մասին, որ ինքը չի տառապում Կառավարության որոշմամբ հաստատված ցանկում ընդգրկված հիվանդություններից որևէ մեկով, որը

հանրային ծառայության պաշտոնում նշանակվելու դեպքում կարող է խոչընդոտել ծառայողական պարտականությունների կատարմանն ու լիազորությունների իրականացմանը (**լրացվում է տեղում**),

9) հայտարարություն այն մասին, որ անձը դատական կարգով չի ճանաչվել անգործունակ կամ սահմանափակ գործունակ (**լրացվում է տեղում**),

10) հայտարարություն այն մասին, որ դատվածությունը սահմանված կարգով հանված կամ մարված չէ (**լրացվում է տեղում**),

11) հայտարարություն համայնքային ծառայության տվյալ պաշտոնի անձնագրով պահանջվող օտար լեզվին (լեզուներին) տիրապետելու մասին (**լրացվում է տեղում**):

Դիմումը լրացնելու ժամանակ ներկայացված՝ անձը հաստատող, կրթությունը, զինվորական ծառայության հետ առնչությունը, աշխատանքային գործունեությունը հավաստող փաստաթղթերի բնօրինակները վերադարձվում են դիմողին՝ դիմումն ընդունելուց հետո:

Առաջատար խմբի երրորդ ենթախմբի թափուր պաշտոնների հիմնական աշխատավարձի չափը կազմում է 340.000 (երեք հարյուր քառասուն հազար) ՀՀ դրամ:

Կրտսեր խմբի առաջին ենթախմբի թափուր պաշտոնի հիմնական աշխատավարձի չափը կազմում է 212.000 (երկու հարյուր տասներկու հազար) ՀՀ դրամ:

Մրցույթի համար դիմումների ընդունման վերջնաժամկետն է՝ **2026 թվականի սեպտեմբերի 24-ը ներառյալ** :

Մրցույթը կկայանա **2026 թվականի հոկտեմբերի 13-ին, ժամը 15:00-ին** Քաջարանի համայնքապետարանի վարչական շենքում՝ 1-ին հարկ, նիստերի դահլիճում (ՀՀ Սյունիքի մարզ, ք. Քաջարան Լեռնագործների 4):

Փաստաթղթերն ընդունվում են Քաջարանի համայնքապետարանի աշխատակազմում (ք. Քաջարան, Լեռնագործների փողոց, շ.4, հեռ՝. +37498747286, էլ. Հասցե՝ qajarancity@mail.ru) կամ Սյունիքի մարզպետի աշխատակազմի տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման հարցերի վարչությունում (ք. .Կապան, Գ.Նժդեհի 1. հեռ.՝ 0285-43552, էլ. հասցե՝ syunik.tim@gmail.com), ամեն օր՝ ժամը 9:00-ից մինչև 18:00-ը, բացի շաբաթ և կիրակի օրերից: